

**«ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊԻ ՆՈՐԱՀԱՅՏ
ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Մեկ դար առաջ Գարեգին Սրվանձտյանցը Կոստանդնուպոլսում լույս ընծայեց ծավալով փոքր մի գիրք՝ «Գրոց ու բրոց կամ Սասունցի Դավիթ և Մհերի դուռ»։ Դա «Սասնա ծռերի» հայտնությունն էր։ Հետագայում, հայ բանահավաք-բանագետների համառ ու տևական ջանքերի շնորհիվ, հայտնաբերվեցին ու գրավեցին նորանոր պատումներ։ Այժմ «Սասնա ծռերի» տպագիր և ձեռագիր պատումների թիվը հասնում է շուրջ 150-ի։

Վեպը ուսումնասիրվեց ու շարունակվում է ուսումնասիրվել հայագիտության տարբեր ճյուղերի ներկայացուցիչների կողմից։

«Սասնա ծռերի» հրատարակության ու հետազոտության ասպարեզում նշանակալից երևույթ է պատումների երկհատոր տպագրությունը, որը՝ իրականացրեց ակադեմիկոս Մ. Աբեղյանը, պրոֆեսոր Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ²։ Այդ կապիտալ աշխատանքը իր գիտական ծանոթագրություններով, բառարաններով, ցանկերով, պատումների ճյուղերի համառոտ շարադրանքով՝ ուղեցույց է վեպը ուսումնասիրողների համար։

Համահավաքի 2-րդ հատորի հրատարակությունից 20 տարի անց, Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատակից, բանասիրական գիտությունների դոկտոր Սարգիս Հարությունյանի ղեկավարությամբ բանահյուսական արշավախումբ է կազմակերպվում վեպի նոր պատումներ հայտնաբերելու նպատակով։ Արշավա-

խումբը գործում էր 1971—72—73 թթ. ամռան ամիսներին, ընդգրկելով ՀՍՍՀ Ապարանի, Աշտարակի, Արովյանի, Արտաշատի, Արարատի, Անիի, էջմիածնի, Կամոյի, Վարդենիսի, Հոկտեմբերյանի, Մարտունու, Մասիսի, Հրազդանի շրջանների գյուղերը, ինչպես նաև Երևանը և Թբիլիսին։ Հետախուզվում է 203 բնակավայր, 65-ից գրի է առնվում վեպի 31 նոր տարբերակ։

Արշավախումբը, ելնելով հավաքած տարբերակների քանակից, որակից, բանահյուսական արժեքից, տարածման ազգագրական շրջանակներից, նպատակահարմար գտավ շարունակել «Սասնա ծռերի» պատումների համահավաք բնագրերի գիտական հրատարակությունը։ Այժմ հրապարակի վրա է 3-րդ հատորը³։

Ներկա հատորի կազմողները առաջնորդվել են Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի մշակած սկզբունքներով, թույլ տալով մասնակի շեղումներ, որոնք առավելապես տեխնիկական բնույթ են կրում։

«Սասնա ծռերի» 3-րդ հատորը, ինչպես և նման յուրաքանչյուր հրատարակություն, գնահատելի է երկու տեսանկյունով՝ բնագրային և բանասիրական։ Հայտնի է, որ մինչև այժմ գրի առած պատումները բաժանվում են երկու հիմնական տիպաբանական խմբի՝ Մշո և Մոկսի։ 3-րդ հատորի նյութերը նույնպես պատկանում են երկու խմբերին և գրի են առնված ՀՍՍՀ Արովյանի, Անիի, Ապարանի, Արարատի, էջմիածնի, Կամոյի, Մասիսի շրջանների գյուղերում վերաբնակված նախկին մոկացիներից, շատախցիներից, մշեցիներից, ալաշկերտցիներից, բայաղետցիներից։

Հատորում ներկայացված 14 պատումից 10-ը լույս են տեսնում առաջին անգամ։ Մնացած չորս պատումից 2-ն առաջին անգամ

¹ Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 7, 8: «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. 6, Երևան, 1973, էջ 605—613: «Սասունցի Դավիթ. նոր պատումներ», հավաքեցին և հրատարակության պատրաստեցին Գրիգոր և Վահագն Գրիգորյանները, Երևան, 1977.

² «Սասնա ծռեր», հատ. 1, Երևան, 1936, հատ. 2, մաս Ա, Երևան, 1944, մաս Բ, Երևան, 1951.

³ «Սասնա ծռեր», հատ. 3, Երևան, 1979 (պատումների գրառումները և բնագրերի պատրաստումը Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի, խմբագիր Ա. Ղանալանյան)։

տպագրվել է գիտական մամուլում⁴, թ-ն՝ Ս. Հարությունյանի կազմած «Սասնա ծռեր» ժողովածուում⁵. սակայն առանց գիտական ապարատի. հրատարակվել է նաև Ը պատումի մի տարբերակը, գրի առնված նույն ասացողից⁶, իսկ Դ պատումի երկճյուղ տարբերակը (նույնպես գրի առնված նույն ասացողից) առաջին անգամ լույս էր տեսել համահավաք գիտական հրատարակության 1-ին հատորում⁷: Այնպես որ բնագրերի մեծ մասը իբրև բանահյուսական նյութ գիտական շրջանառության մեջ է մտնում առաջին անգամ: Բանահյուսական առումով թերևս տարակուսանք է հարուցում միայն Ե պատումը: Մեզ թվում է, թե այն գրական ազդեցություն է կրում, մի երևույթ, որը միանգամայն բացատրելի է գրական ավանգույթի ճնշման առկայության պայմաններում:

Հատորի պարունակությունը կազմող 14 պատումներն ընդգրկում են Դավթի ճյուղը: Պատումները տողատված են Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի հետևություններով, առանձին դրվագները բաժանված են պարբերությունների, բայց չեն վերնագրված, որը մասնակի շեղում է նախորդ հրատարակության սկզբունքներից: Մավալային տարբեր ընդգրկումներ ունեն քննվող հատորի պատումները. ամենաընդարձակը՝ 2119 տող (Զ պատում) և ամենահամառոտը՝ 386 տող (ԺԱ պատում): Երգային, բանաձևային հատվածները, հատկապես ողորմիսները, նոր գրառումներում հանդիպում են սակավ: Նրանք առկա են զխավորապես Մոկաց պատումներում⁸. Հատորը կազմողները իրավացիորեն դիտել են. «...Վեպին բնորոշ ազատ ոտանավորի տաղաչափական կառուցվածքն ու ռիթմը նորագույն գրառումներում աստիճանաբար քայքայվել են և պատումները զգալի չափով մոտեցել են սովորական արձակ պատմության»⁹:

Լեզվական տեսակետից նոր պատումները պատկանում են Մոկսի, Շատախի, Մշո բարբառային խմբերին: Նրանց լեզուն ներկայացնում է բարբառների ներկա վիճակը, որը հեռու է անաղարտ լինելուց. ազգագրական խմբե-

րը, կտրված լինելով բնաշխարհից և ապրելով ցրիվ վիճակում, բնականաբար, իրենց լեզուն չէին կարող զերծ պահել ինչպես հարևան բարբառների, խոսվածքների, այնպես էլ գրական լեզվի ազդեցությունից: Պատումներում օգտագործվում են մի շարք արտահայտություններ, բառեր, որոնք նոր ժամանակների արդյունք են (պալատկա, վայրենի, մամա, մեծանում են, կտրում են, իրա, սոսում ա, տեսնում ա և այլն):

Հատորի նյութերը գրի են առնված ժամանակակից տեխնիկայով՝ ձայնագրիչի միջոցով և ապա՝ վերծանված: Այդ առումով ներկայացված են բարձրարժեք գրառումներ, որոնցում պահպանված են ասացողների լեզվի ու ոճի բոլոր մանրամասներն ու նրբերանգները: Հատորի սովորական ընթերցանությունը ստեղծում է կենդանի ասացողին ունկնդրելու պատրանք, որը և քննվող տարբերակների առավելությունն է նախորդների համեմատ: Հասկանալի է լեզվական-բարբառային այն դժվարությունը, որ ունեցել են կազմողները բնագրերը տպագրության պատրաստելիս. նրանք, հիմնականում առաջնորդվելով կայուն քերականական սկզբունքներով, երբեմն անհետևողականություն են ցուցաբերում: Այսպես, օրինակ, բարբառային նույն ձևերի գրության միօրինակությունը նույն պատումի շրջանակներում երբեմն խախտվում է (պալաքվոր-բալաքվոր, կուտեն-կյուտեն, պագել-պակել, ճոկան-ճոգան, կր և չբ մասնիկների անջատ և միասին գրելու դեպքերը և այլն):

Կազմողները յուրաքանչյուր պատումին կից մանրամասն տեղեկություններ են հաղորդում ասացողի մասին՝ հետևելով վեպի համահավաք բնագրերի նախորդ գիտական հրատարակության ավանդներին: Հետամուտ լինելով ասացողների կենսագրությանը, նրանք պարզում են վերջիններիս կամ նրանց նախնիների ծննդավայրը, տեղեկություններ են տալիս այն շրջանակների մասին, որ կենցաղավարել է վեպը, այն շնորհալի վիպասացների մասին, որոնք իմացել ու ավանդել են վեպը և որոնցից լսել ու սովորել են ներկա հատորի ասացողները:

Ներկայացված պատումների արժեքը հայագիտության, մասնավորապես բանագիտության համար նշանակալից է. տեղին է այդ կապակցությամբ վերհիշել վեպի լավագույն գիտակ ու տեսաբան Մ. Աբեղյանի կարծիքը. «Որքան էլ աղճատված և աննշան երևան և նույնիսկ անիմաստ թվին վեպի պատմվածքները, իսկպես և ամեն ժողովրդական բանահյուսության արդյունք, դարձյալ ունեն իրենց արժեքը: Մի բառ, մի խոսք, մի հատուկ անուն լոկ կարող է երբեմն բանալ ուսումնասիրողի առաջ»:

4 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ), 1973, № 7, 8:

5 «Սասնա ծռեր», աշխատություններ Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 249—311:

6 «Սասունցի Դավիթ. նոր պատումներ», էջ 187—250:

7 «Սասնա ծռեր», հատ. 1, էջ 753—784:

8 «Սասնա ծռեր», հատ. 3, Ա, Գ, Դ պատումներ:

9 Նույն տեղում, էջ 18:

մի ամբողջ պատմական դիպված, մի հնացած պատմական երևույթ և ավելի ևս հասկանալի դարձնել վեպը: Կատարյալ ուսումնասիրության համար ոչ մի պատմվածք անուշադիր չպիտի թողնել, ուստի և անհրաժեշտ է, որ շատ տեղերի և բազմաթիվ պատմվածքներ ունենանք»¹⁰:

Քննարկվող հատորն ունի ցանկեր, առաջաբան՝ գրված գիտական բարձր պատասխանատվությամբ ու բարեխղճությամբ: Առաջաբանում ամփոփված են արշավախմբի երեք տարվա գործունեության արդյունքները: Մեզանում բանահյուսական արշավախմբերի գործունեությունը լուսաբանող նման առաջաբան-հետազոտություններ քիչ են գրվում, և ներկա հատորը այդ առումով շահում է: Կազմողները, առաջաբանում վերլուծելով իրենց կողմից գրի առած 81 վիպասացների մասին մանրամասն տեղեկություններն ու տվյալները, հանգում են հետաքրքիր եզրակացությունների: Վեպի ասացողների կենսագրական տվյալները լուսաբանելով նրանք նշում են, որ վեպը իմացող-պատմողները մեծ մասամբ 70—110 տարեկան են և գերազանցապես՝ տղամարդիկ: 81 ասացողից 47-ը անգրագետ են, դուրս եկած գյուղական և մասամբ՝ արհեստավորական միջավայրից: Հատորի կազմողները հավաստում են, որ վեպը մատնվել է մոռացության, մի երևույթ, որը դիտել է դեռևս Գ. Սրվանձտյանցը: 81 ասացողներից 55-ը երբևէ այն չեն պատմել, միայն լսել ու մտապահել են, իսկ 26-ը պատմել են շատ վաղուց՝ 30—40 տարի առաջ: Թեև վեպի պատումները գրի են առնվել Արևելյան Հայաստանում, այն չի տեղայնացվել: Բոլոր ասացողների կենսագրությունը տանում է Արևմտյան Հայաստան: 81 ասացողներից 24-ը ծնվել են Արևելյան Հայաստանում, որոնք, սակայն, անցյալ դարում Արևմտյան Հայաստանից գաղթած ընտանիքների սերունդներ են:

Հատորի հեղինակները բարձրացնում են մի շարք խնդիրներ, որոնք թեև նորություն չեն, սակայն պարզում և ընդարձակում են որոշ դրույթներ: Այսպես, նրանք մանրամասն հետախուզումների միջոցով ճշտել են հայտնի վիպասանական դպրոցների գոյատևման հետ առնչվող հարցերը, հին տեղավայրերի շարքում ավելացրել նոր տեղավայրեր՝ իրենց վարպետ վիպասացներով: Այդպիսի մի ուրույն դպրոց է եղել Ալաշկերտի խաստուր գյուղում, որի ավանդների թերևս վերջին կրողն է ներկա հատորի 2 պատումի ասացող Սեդրակ Արաջյանը: Վիպասանական դպրոցների գոյությունը նորից

հաստատում է այն կարծիքը, որ վեպի պատահական ավանդում չի եղել, վեպը կենցաղավարել է նեղ ազգագրական, ընտանեկան շրջանակներում: Կազմողների հետամտությունները պարզել են, որ ներկա պատումների ասացողները ևս վեպը սովորել են մոտ հարազատներից ու բարեկամներից: Նոր աշխարհագրական անուններ են մտցվում վեպի տարածման ու կենցաղավարման շրջանակները՝ Բաղեշ ու Բուլանըխ, Արճեշ, Խնուս ու Մանազկերտ: Սասունից մինչև այժմ հայտնի է եղել ընդամենը երկու պատում: Հատորը պատրաստողներն այժմ ձեռքի տակ ունեն 21 պատում:

Առաջաբանում քննարկվում են նաև լեզվի ու ոճի հարցեր: Ըստ վեպի ավանդման ոճաբանական սկզբունքի հեղինակները պատումները խմբավորել են հետևյալ կերպ. 1) ավանդական-պատմողական, արձակ և չափածո հատվածներով, որի մեջ ընդգրկվել են 43 պատում, 2) ազատ-պատմողական, արձակ և չափածո հատվածներով, 19 պատում, 3) ազատ-պատմողական, արձակով, 19 պատում: Առաջաբանում հատուկ ուշադրության է արժանացել դեպի վեպը վիպասացների ունեցած վերաբերմունքի հարցը: Ինչպես նախորդ, այնպես էլ նոր պատումների վիպասացները վեպն ընդունում են իբրև իրենց նախնիների իրական պատմությունը և մեղք են համարում որևէ ինքնահնար բան ավելացնելու: Նրանք Սասունի, Մշո դաշտի մի շարք տեղավայրերի անունների ծագումը կապում են վեպի հերոսների կյանքի ու գործունեության հետ: Նույնիսկ Սասնա որոշ տոհմեր իրենց սերած են համարում Դավթի ցեղից (Թամո Դավթյան):

Վեպի՝ մինչև մեր օրերը գոյատևելու փաստը առաջաբանի հեղինակները իրավամբ բացատրում են զուտ հոգեբանական գործոնով. «...Լթե չի կորել բնավ. ապա միմիայն շնորհիվ հիշած արևմտահայ զաղթական սերնդի իր երկրի ու պատմության նկատմամբ ունեցած շխամբող սիրո և անմար կարոտի»¹¹: Սփյուռքահայ նկարիչ Հ. Շիրազի վարպետությամբ ու ճաշակով արված լուսանկարները, որոնք պատկերում են վեպի պատմական վայրերը, մի առանձին ճանաչողական, հուզական երանգ են հաղորդում բանահյուսական նյութին:

Այսպիսով, ներկա հատորը հարստացնում է հայ բանագիտությունը մի նոր արժեքավոր աշխատանքով, որը արժանի շարունակություն է հանդիսանում մեր ազգային հերոսական վեպի՝ «Սասնա ծռերի» համահավաք բնագրերի գիտական հրատարակության:

Քանախի. գիտ. թեկնածու Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

¹⁰ Մ. Ա. Բ. Ե. Ո. Յ. Ա. Ն. Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 16:

¹¹ «Սասնա ծռեր», հատ. 3, էջ 17: